ԱՎԴ 2/0042/01/17

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2018 թվականի ապրիլի 04- ին Մասիս քաղաքում

Արարատի եւ Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը՝

նախագահությամբ-դատավոր՝ ԹԱԹՈՒԼ ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

մասնակցությամբ-մեղադրող՝ ՀՀ զինվորական

կենտրոնական դատախազության Եղեգնաձորի

կայազորի զինվորական դատախազության

դատախազ՝ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

պաշտպան՝ Գ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

դռնբաց դատական նիստում քննելով քրեական գործն ըստ մեղադրանքի՝

Բենիկ Մուշեղի Պապիկյանի, ծնված 10.09.1997թվականին Ստեփանավան քաղաքում , հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, նախկինում չդատված, չամուսնացած, խնամքին ոչ ոք, 2016թվականի հունվարից մինչև 2018թվականի հունվարի 30-ը ծառայել է ՀՀ ՊՆ թիվ 70179 զորամասում որպես 2-րդ հրաձգային գումարտակի, 6-րդ վաշտի, 1-ին դասակի 3-րդ ջոկի ավագ հրաձիգ, ճաշարանի հացահատ , կոչումով շարքային, 2018թվականի հունվարի 30-ին զորացրվել է , հաշվառված է՝ Լոռու մարզ, գյուղ Լոռի Բերդ, Ա.Երկաթի փողոց, տուն 28 , կալանքի տակ չի գտնվել , խափանման միջոց է ընտրված՝ հրամանատարության հսկողության հանձնելը,

մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ.

ՊԱՐԶԵՑ

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , 357-360րդ, 369-րդ հոդվածներով, 366-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով դատարանը

ՎՃՌԵՑ

Բենիկ Մուշեղի Պապիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող արարքի կատարման մեջ ճանաչել և հռչակել անմեղ և արդարացված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով:

Բենիկ Մուշեղի Պապիկյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ հրամանատարության հսկողության հանձնելը՝ վերացնել՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Ապացույց ճանաչված այլ փաստաթղթեր հանդիսացող 09.05.2017թվականի թիվ 248 և 13.05.2017թվականի թիվ 35 ապրանքագրերը պահել քրեական գործի հետ՝ վերջինիս պահելու ամբողջ ժամանակամիջոցում:

Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում :

ԴԱՏԱՎՈՐ՝ Թ.Ջ.ՊՈՂՈՍՅԱՆ